Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ

Հայաստան, Երևան ք., Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-04

Թիվ 698 17. 02. 2016թ.

Հատուկ բաժնի պետ՝ տիկին Կ. Կարախանյանին
Գլխավոր հաշվապահ՝ տիկին Ա. Բաբաջանյանին
Իրավաբանական կենտրոնի ղեկավար՝
տիկին Է. Տարախչյանին
Կրթության հոգեբանության և սոցիլոգիայի ֆակուլտետի դեկան՝ տիկին Ռ. Պետրոսյանին

Ուղարկում եմ ՀՊՄՀ-ի և ՀՀ ՊՆ միջև 12.02.2016թ. կնքված պայմանագիրը՝ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկան և ուսումնական գործընթացը ՀՀ ՊՆ Մարշալ Արմենակ Խանփերյանցի ռազմական ավիացիոն ինստիտուտում կազմակերպելու մասին: Այդ կապակցությամբ խնդրում եմ՝

1. Հատուկ բաժնի պետին՝ սահմանված կարգով պահպանել պայմանագրի բնօրինակը:
2. Գլխավոր հաշվապահին՝ սահմանված կարգով իրականացնել պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները:
3. Իրավաբանական կենտրոնի ղեկավարին՝ անհրաժեշտության դեպքում անդրադառնալ պայմանագրային պարտավորությունների կատարմանը:
4. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանին՝ սահմանված կարգով ապահովել պայմանագրի կատարումը:
5. Գ. Սահաթչյանին՝ պայմանագրի մեկ օրինակը պահպանել համապատասխան թղթապանակում:

Հարգանքով՝ **Ա. Երեմյան**

Կատ.՝ Գ. Սահաթչյան
Հեռ. 59-70-04/60-04/

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՓԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «02» 2016թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, այսուհետ՝ Համալսարան, ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, որը գործում Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ պաշտպանության նախարարությունը, այսուհետ՝ Նախարարություն, ի դեմս Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ անվանվելով Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով Նախարարությունը կազմակերպում է Համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի <<Մանկավարժություն և հոգեբանություն /զինվորական/>> մասնագիտությամբ սովորող բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների զինվորական պատրաստականության առարկաների դասավանդումը և պրակտիկան, ինչպես նաև Համալսարանի բոլոր առաջին կուրսի ուսանողների (ամսական երկու մուտքով, մեկ ակադեմիական ժամ) Ռազմաբժշկական պատրաստության թեմայով ուսուցման գործընթացը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում /այսուհետ՝ Ինստիտուտ/՝ Համալսարանի ռեկտորի և Ինստիտուտի պետի ամենամյա համատեղ հաստատված ուսումնական պլանի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 2
ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն Պայմանագրի դրույթների իրագործման ընթացքում Կողմերը կրում են պարտականություններ և իրականացնում իրավունքներ:

2.2. Համալսարանը պարտավորվում է՝

2.2.1. ապահովել ուսանողների կարգապահությունը և հաճախումները,

2.2.2. պրակտիկայի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ Նախարարություն ուղարկել մասնակիցների վերաբերյալ հայտը՝ Նախարարության ներկայացուցչի կողմից ուսանողների ընտրության գործընթացը կազմակերպելու նպատակով,

2.2.3. գիտամանկավարժական աշխատանքային գործընթացը համակարգելու նպատակով Ինստիտուտի պետի՝ ուսումնական և գիտական աշխատանքի գծով տեղակալին Համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում ձևակերպել որպես զինվորական կրթության գծով գիտաուսումնական խորհրդատու:

2.3. Համալսարանն իրավունք ունի՝

2.3.1. պարբերաբար վերահսկել ծրագրերի կատարումը, ուսումնական գործընթացը և ուսանողների մասնակցությունը,

2.3.2. Նախարարությանը առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելուց հետո միակողմանի հրաժարվել Պայմանագրից, եթե Նախարարությունը չի կատարում սույն Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

2.4. Նախարարությունը պարտավորվում է՝

2.4.1. վերահսկել ուսումնական գործընթացի կազմակերպումը համաձայն Համալսարանի ռեկտորի և Ինստիտուտի պետի կողմից համատեղ հաստատված ուսումնական պլանի,

2.4.2. Ինստիտուտում ուսանողների պրակտիկայի կամ ուսուցման գործընթացի անցկացման ժամանակ Համալսարանին տեղեկացնել ուսանողների բացակայությունների մասին,

2.4.3. ուսանողներին հնարավորություն տալ ծանոթանալու մասնագիտությանն անհրաժեշտ գրադարանի, ծրագրերի և այլ փաստաթղթերի հետ, որոնք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք:

2.5. Նախարարությունն իրավունք ունի՝

2.5.1. Համալսարանին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելուց հետո միակողմանի հրաժարվել Պայմանագրում ամրագրված պարտավորություններից, եթե Համալսարանը սահմանված կարգով չի կատարում Պայմանագրով ստանձնած իր պարտավորութունները:

2.6. Համագործակցության շրջանակը

Կողմերը կարող են համագործակցել Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներում, որը կամրագրվի սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 3
ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունները ժամանակին կամ սահմանված կարգով չկատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 4
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն Պայմանագրի դրույթների իրականացման կամ մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 5
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հինգ տարի ժամկետով:

5.2. Սույն Պայմանագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում հետագա հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից մեկը համապատասխան ժամանակահատվածի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

5.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ ու լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող առանձին համաձայնագրերով և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 5.1 կետով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 6
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Համալսարանը կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի <<Մանկավարժություն և հոգեբանություն /զինվորական/>> մասնագիտությամբ սովորող ուսանողների զինվորական պատրաստականության առարկաների ուսուցման և պրակտիկայի գործընթացը Ինստիտուտի ուսումնական բազայում կազմակերպելու նպատակով կաջակցի Ինստիտուտի ուսումնանյութական և տեխնիկական բազան համալրելուն՝ յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ ուսումնական խմբի համար որպես նվիրաբերություն Ինստիտուտի հաշվին փոխանցելով մեկ միլիոն ՀՀ դրամ: Սույն Պայմանագրով սահմանված գումարի փոխանցումը Համալսարանը պարտավորվում է կատարել մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 24-ը: Համալսարանի առաջին կուրսի ուսանողների Ռազմաբժշկական

պատրաստության թեմայով ուսուցման գործընթացի կազմակերպման համար Համալսարանը որևէ ֆինանսական պարտավորություն չի կրում:

6.2. Սույն Պայմանագրով նախատեսված ուսումնաարտադրական և ուսուցման գործունեության կազմակերպումը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում:

6.3. Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող բնօրինակից:

6.4. Սույն Պայմանագրի դրույթների իրագործման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտը:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 17	ՀՀ, 0044, ք. Երևան, Բագրևանդի 5
ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ	ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ